

Մի վե՛ր կացէք, իմացէ՛ք,
Տեսէ՛ք իմ սըրտի ցաւերս
Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք:— (էջ 6)

«Ա՛խ կանեմ, արուն կու գայ.
Սե սըրտիս գարո՞ւն կու գայ...
Սարերին գարուն կու գայ
Սե սըրտիս արուն կու գայ... (էջ 19)

«Ա՛յ, հեա՛, հեա՛, սի՛րտըս,
Ճընճըղկան թե ա սի՛րտըս.
Քան պուտը կարմիր չը կայ,—
Բաց անեմ՝ սե ա սի՛րտըս: (էջ 31)

«Քա՛մի, մի՛ տա մեր դըռան,
Սիրտս ի մըրմուռ, աչքերս ի լաց.
Ասօր նըստիմ, էնքան տի լամ,
Քարէ կարկուտ աչքերէս գայ:

Քա՛մի, մի՛ տա մեր դըռան:
Իմ խոցերն է շատ-
Վանայ ծով զըմէն դեղ ընի,
Զիմ դառ վերբեր չի՛ դեղի:» (էջ 52)

Ահա՛ ձեզ թէ բանաստեղծութիւն, թէ գզացմունք և թէ
հոգեբանութիւն արտայայտող մըմունքներ: Սակայն.

«Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում» (էջ 1).

2. Ե. ԵՆՊԼԻԻՆԻ. Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգ.
Մամբրէ վարդապետ. Վաղարշապատ. 1903. 64 էջ.
գ. 10 կօպ.

Քրիստոնէական ոգուով գրուած այս գրքովը ջատագո-
վութիւն է սուրբ գրքի. հեղինակը բացատրում է, թէ մոլո-
րութիւն է երբ մարդիկ իբրեւ թէ հիմնուելով մարդկային բանա-
կանութեան վրայ, չեն ընդունում ս. գրքի ճշմարտութիւնները
գործա իսկապէս ծանօթ չեն սբ. գրքի բովանդակութեանը
«Ով իրեն հաւատացող քրիստոնեայ է երևակայում և միևնոյն
ժամանակ գրագէտ է կամ կրթուած, նորա համար Ս. գրքի բո-

վանդակութիւնը հիմնաւորապէս չիմանալը նախատինք բերող տգիտութիւն է...» Եջ 21—22. Հեղինակն ընդիմաբոսում է նըրանց, որոնք կարծում են թէ հին հեթանոսական և նոր ժամանակի փիլիսոփայութեանց մէջ կարելի է գտնել նոյնչափ բարձր և բարոյական հասկացողութիւններ, որպիսիք կան սքզդքի մէջ. «դուք չէք հաւատում Աստուածային Յայտնութեանը, բարի. ձեզ համար Ս. գիրքը մարդկային բանականութեան արդիւնք է. բայց կրկնում ենք, այդ գրքի առաջ երկիւղածութեամբ խօնարհուել է միլիօնաւոր մարդկանց բանականութիւնը 19 դարերի ընթացքում և այժմ ևս քաղաքակիրթ ազգերը չեն մատահանում մի ուրիշը նորա տեղը դնել. Եւ մարդկային բանականութեան այդ թանկագին յիշատակարանը՝ դո՛ւք, բանականութեան երկրպագուներդ, հարկաւոր չէք համարում հիմնաւորապէս ուսումնասիրել. Մարդկային բանականութեան այդ սրբութեանը դուք գոռոյ անփութութեամբ էք վերաբերւում և գրանից յետոյ ձեզ իրաւունք էք համարում խօսելու մարդկային գիտակցութեան և բանականութեան բարձր նշանակութեան մասին՝ առ մարդկութիւնը տածած յարգանքի մասին»։ Եջ 29. Թարգմանութեան լեզուն պարզ ու հասկանալի է. տպագրական սխալներ չառ կան։

3. ԱՆՏՕՆ ՉԵԽՈՎ. Գրագ. Թարգմ. Տ. Վ. Բագու, 1903
18 էջ. գ. 3 կոպ.

«Գրագը» տաղանդաւոր 26-ամի փոքրիկ, բայց իմաստալի գրուածքներից մէկն է, մի փիլիսոփայութիւն՝ երկրային կեանքի անցաւորութեան և ունայնութեան վերայ։ Արդեօք մահուան պատիժն է լաւ, թէ ցմահ բանտարկութիւնը. այս խնդրի մասին եղած վիճաբանութեան միջոցին մի երիտասարդ իրաւաբան ասում է. «Թէ մահաւան պատիժը և թէ ցմահ բանտարկութիւնը հաւասարապէս անբարոյական է, բայց, եթէ ինձ առաջարկէին լիտերի մահուան պատիժ կամ ցմահ բանտարկութիւն, այն ժամանակ, ի հարկէ, ես երկրորդը կընտրէի. կեանքը, ինչպէս էլ ապրելու լինենք, աւելի լաւ է, քան չապրելը» (էջ 4)։ Վիճաբանութիւնը տաքանալով՝ իրաւաբանը գրագ է գալիս երկու միլիօնով, որ տասնեւհինգ տարի բանտարկուած կմնայ և կատարում է իւր խօսքը. Բանտարկուած 15 տարուայ ընթացքում նա հարիւրաւոր հատորներով գրեք